**Համաձայնագիր-1**
**21.11.2019թ. կնքված N ՊԵԿ-ՄԱԾՁԲ-19/4 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**ք. Երևան** « 10 » Տարրի 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն՝ Գ.Գրիգորյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 21.11.2019թ. կնքված N ՊԵԿ-ՄԱԾՁԲ-19/4 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Փոփոխել Պայմանագրի թիվ-1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի CPV 66511170/501 կոդը 66511180/1 CPV կոդով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է.Գևորգյան**
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ
ք.Երևան, Հյուսիսային պողոտա 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581
«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի գործադիր տնօրեն՝

**Գ. Գրիգորյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«21» նոյեմբերի 2019թ. կնքված
N ՊԵԿ-ՄԱԾՁԲ-19/4 գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎճԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը | **Ընդամենը Տարի** |
| 1 | Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ծառայություններ | 4215 | | | 5 169 000 | 5 169 000 | 5 169 000 | 5 169 000 | 5 169 000 | 5 169 000 | 5 169 000 | 5 169 000 | 5 169 000 | 5 169 000 | **5 169 000** |

*Վճարման գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է. Գևորգյան**
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ
ք.Երևան, Հյուսիսային պողոտա 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581
«Ռոսգոստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի գործադիր տնօրեն՝

**Գ. Գրիգորյան**
(ստորագրություն)
Կ.Տ